ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Վանաձոր (Հայաստանի Հանրապետություն) և
Ցխալտուբո (Վրաստանի Հանրապետություն) միջև
Վանաձորի համայնքապետարանը (Հայաստանի Հանրապետություն) և Ցխալտուբոյի քաղաքապետարանը (Վրաստանի Հանրապետություն), այսուհետ՝ Կողմեր,

Ցանկանալով ամրապնդել երկու քաղաքների միջև բարեկամական հարաբերությունները,
Նպատակ ունենալով տարբեր բնագավառներում զարգացնել համագործակցությունը,
Հիմք ընդունելով փոխադարձության և փոխադարձ հետաքրքրության սկզբունքները
Համաձայնեցին հետևյալի մասին.
Ստեղծել համագործակցային հարաբերություններ, որոնք կզարգացնեն երկու քաղաքների միջև տնտեսական, մշակութային և կրթական հարաբերությունները:
Կողմերը կհամագործակցեն հետևյալ ոլորտներում.

- **Առևտրային և տնտեսական հարաբերությունների զարգացում և խթանում.**
- **Տնտեսական ֆորումների կազմակերպում;**
- **Աջակցություն արվեստագետների և մշակութային հաստատությունների միջև համագործակցությանը, Վանաձորում և Ցխալտուբոյում անցկացվող միջոցառումների կազմակերպմանը,**
- **Տեղեկատվության փոխանակում տնտեսության, մշակույթի,ավանդույթների արվեստի, սպորտի, կրթության, զբոսաշրջության, շրջակա միջավայրի պահպանության և առողջապահության ոլորտներում.**
- **Կողմերը կնպաստեն քաղաքներում տուրիզմի զարգացմանը**
- **Կողմերը կփոխանակվեն քաղաքների կառավարման փորձով և քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությամբ՝ պաշտոնական պատվիրակությունների այցերի և աշխատանքային խմբերի հանդիպումների կազմակերպման միջոցով,**
- **Կողմերը կխրախուսեն տեղական ընկերություններին՝ հաստատելու երկկողմ հարաբերություններ,**

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի ներկայացուցիչների ստորագրման օրվանից:

Կնքվեց՝ Վանաձոր քաղաքում, 2 օրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն:
Տարակարծություններ առաջանալու դեպքում գերակայությունը տրվում է անգլերեն օրինակին:

Վանաձորի համայնքապետարանի կողմից՝	**Ցխալտուբոյի քաղաքապետարանի կողմից՝**
Համայնքի ղեկավարի պաշտոնակատար	**Համայնքի ղեկավարի տեղակալ**
ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ	**ԳՐԻԳՈԼ ԿՈՒՐԱՇՎԻԼԻ**

12.08.2022թ.